ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆՁՈՐՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. Խնձորուտ

Հեռ./0282/ 94-2-20
Էլ. Հասցե khndzorut@mail.ru

„22„հունվար „„.2013թ.

ՀՀ Վայոց Ձորի մարզպետ
պարոն Է. Ղազարյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով՝ Ձեզ է ներկայացվում Վայոց ձորի մարզի Խնձորուտի համայնքի ավագանու 2013թ. Հունվարի 21-ի թիվ 1 նիստի N7 որոշմամբ հաստատված Խնձորուտ համայնքի զարգացման 2013-2017թթ քառամյա ծրագիրը

Առդիր 11 (տասնմեկ) էջ

Խնձորուտի համայնքի ղեկավար Ժ. Նազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԽՆԶՈՐՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար՝ Ժ. Նազարյանը

Հաստատվել է համայնքի ավագանու 2013թ. N 1 նիստի N 7 որոշմամբ

Խնձորուտ 2013

/Համայնքի անվանումը/

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆՁՈՐՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Վայոց Ձորի մարզի
Խնձորուտի համայնք. հեռ. /0282/9-42-20
Էլ. փոստ khndzorut@mail.ru

ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

«21» հունվար 2013 թվականի N 7

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել համայնքի քառամյա զարգացման ծրագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԽՆՁՈՐՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար՝ Ժ. Նազարյանը

Հաստատվել է համայնքի ավագանու 2013թ. N 1 նիստի N 6 որոշմամբ

Խնձորուտ 2013
/Համայնքի անվանումը/

L.S.

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ,ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Խնձորուտ գյուղը վերաբնակեցվել է 1928թ. Պարսկաստանի Մալմաստ նահանգի Խոյ գավառից գաղթած հայերով:
Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1770մ բարձրության վրա;Հեռավորությունը մարզկենտրունից՝ 46 կմ է:Համայնքը 40կմ երկարությամբ սահմանակից է Նախիջևանին:
Գյուղը շրջապատված է բարձր լեռներով , որտեղից բխող աղբյուրներից խմելու ջրով ապահովված է մոտ 70տոկոսով:
Կլիման ձմռանը ցրտաշունչ է ,ամռանը՝ զով;Վերջին տարիների երաշտի պատճառով տուժել է գյուղատնտեսությունը:

1.2ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում է 519 բնակիչ:Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է
1.Երեխաներ/0-6տ/ - 40
2.դպրոցականներ/7-17տ/ - 74
3.18-62 տարեկան - 295
4.թոշակառուներ - 77
5.հաշմանդամներ - 25
6.աշխատունակներ - 270
7.ընտանիքների /ծխերի/ թիվը - 168
8.գրանցվածներ <<Փարոս>> ընտանեկան նպաստների համակարգում - 20

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի /գյուղապետի/ կոկմից ,որը ընտրվում է չորս տարին մեկ անգամ:Աշխատակազմը ունի հետևյալ կառուցվածքը՝

1.աշխատակազմի քարտուղար
2. գլխավոր մասնագետ-գյուղատնտես
3. գլխավոր մասնագետ ֆինանսիստ-հաշվապահ
4.օպերատոր
5.հավաքարար
6պահակ

Համայնքի ենթակառույցներն են՝

Գրադարան
գրադարանավար

ակումբի վարիչ

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 8 հոգուց:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

Հավելված 1

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՏՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքը սեփականություն հանդիսացող գույքի ցանկը բերված է հավելված 2-ում:

Հավելված 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑՈՒՑԱԿ

1. Համայնքի վարչական շենք	1
2.Պահեստ մոդուլ	1
3. Խմելու ջրի ջրամատակարարման համակարգ	
4. Ներհամայնքային ոռոգման համակարգ	
5.Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ	
6. Ներհամայնքային կամուրջներ	2
7. Հուշարձան	1
8. Եկեղեցի	2
9. Գերեզմանատուն	3

Տնտեսական անկման հետևանքով համայնքի վիճակը վատթարացել է:

1.10՝ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ,ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքը չունի մշակույթի տուն:Գործող գրադարանը ունի 8800 կտոր գիրք:

Մարզահրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից:

1.11 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժ.կետ:Այն վերանորոգված է:

Բուժ. կետը ունի մեկ աշխատող:Ամենամոտ հիվանդանոցը գտնվում է Վայք քաղաքում,որը 30կմ հեռու է գյուղից:

1.12 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքը ունի բուհերի ավելի քան 20 շրջանավարտ, որոնք կարողանում են կազմակերպել համայնքում կրթությունն ու դաստիարակությունը:

Գյուղում կա 17-րդ դարի եկեղեցի, կան խաչքարեր և այլ տեսարժան վայրեր որոնց միջոցով կարելի է զարգացնել զբոսաշրջությունը :

1.13 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

.Ճանապարհների, խմելու և ոռոգման ջրի համակարգերի անմխիթար վիճակ

.Ծնելիության նվազում

.Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ

.Գործազրկության բարձր մակարդակ

.Հողերի անջրդիության պատճառով եկամուտների նվազում

1.14 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

. Մեծ աշխատուժի առկայություն

. Մեծ ջրի ամբարման հնարավորություն

1.15 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Խմելու ջրի համակարգի վերանորոգման անհրաժեշտությունն /կեղտաջրերի թափանցումը խմելու ջրի համակարգ՝ կարող է առաջացնել վարակիչ հիվանդություններ/:

Ոռոգման ջրի համակարգի վերանորոգման անհրաժեշտություն /որի բացակայության պատճառով կտուժի գյուղատնտեսությունը, մասնավորապես գյուղ մթերքների արտադրությունը/:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողական բարելավել համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները:

Բարեփումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

.զարգացնել գյուղատնտեսությունը և անասնաբուծությունը համայնքում

. համայնքն ապահովել շուրջօրյա խմելու մաքուր ջրով

. կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը

. ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը:

Ծրագիր 1

Խմելու ջրի համակարգի վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնախնդիրները

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել 1980թ: Վթարված ջրագծերի երկարությունը կազմում է 1.7 կմ, որից 1կմ արտաքին ցանց, 700մետր ներքին ցանց:

Համայնքների հրատապ խնդիրներից է խմելու ջ րի ջրագծերի հիմնական վերանորոգումը:

Ընդառաջելով բնակչության դիմումներին սույն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգման ենթարկել նշված ջրամատակարարման համակարգը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

. Ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով

. նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները

. կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

. կազմել ծրագրի իրականացման նախագծահաշվարկային փաստաթղթերը

. ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը համայնքը 100 տոկոսով կունենա խմելու ջուր:

Ծրագրի հիմնական միջոցների գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով 1.7 կմ երկարությամբ ջրագծի վերանորոգումը կկազմի 3.5 մլն դրամ:

Ծրագիր 2

Համայնքի ոռոգման ներքին ցանցի վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքում ջրովի են միայն տնամերձ հողատարածքները, իսկ մնացած տարածքը անջրդի է:

Կառուցվել է <<Օղբին-Բոզդեմ>> ինքնահոս ոռոգման ջրագիծ, որը միացվել է նախկինում կառուցված ոռոգման ջրագծին: Ջրագծի ներքին ցանցը գտնվում է անսարք վիճակում, երկար տարիներ չգործելու պատճառով այն հիմնավորապես քայքայվել է բաշխիչ- բաժանարար հատվածները:

Ծրագիրն իրականացնելու համար կպահանջվի մոտ 2 մլն ԱՄՆ դոլար:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

-ապահովել ջրամբարից ներքև գտնվող մոտ 70 հա տարածքը ոռոգման ջրով

-բարձրացնել մշակվող հողերի բերքատվությունը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

Հիմնախնդիր բարձրացնել ՀՀ կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար

Ապահովել համայնքի կողմից ներդսրումը

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝

Համայնքում 70հա տարածություն կապահովի ոռոգման ջրով

Կավելանա գյուղ մթերքների արտադրությունը

Ցանովի խոտաբույսերի բերքատվությունը ավելացնելով կավելանա նաև անասնագլխաքանակը

ԾՐԱԳԻՐ 3

ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նկարագրությունը ու հիմնավորումը

Ոռոգման ջրատարի երկարությունը կազմում է երկու կիլոմետր:
Մինչև տնամերձ հողամասերին հասնելը ունենում ենք ջրի կորուստ մոտ 50 տոկոսով:
Սույն ծրագրով առաջարկվում է ջուն անցկացնել կիսախողովակաշարով:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ապահովել մոտ 35 հա տնամերձ հողամասերի ոռոգումը
Վերացնել ոռոգման ջրի անհարկի կորուստը
Կազմել ծրագրի իրականացման նախագծահաշվարկային փաստաթղթերը

Ծրագիր 4

Համայնքի ներքին ճանապարհների բարեկարգում

Ծրագրի նկարագրությունը ու հիմնավորումը

Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 8կմ,որոնք քանդված են և որոշակի տեղերում անանցանելի են:
Սույն ծրագրով առաջարկվում է բարեկարգել փողոցները:

Ծրագրի նպատակն ուխնդիրները

.Ապահովել տրանսպորտայինբոլոր միջոցների բավարար երթևեկությունը
.Վերացնել փողոցների ջրափոսերը:
.Համագործակցելով /Նպաստ աշխատանքի դիմաց/ ծրագրի հետ կազմել ծրագրի իրականացման նախագծահաշվարկային փաստաթղթերը:
.Կտարել ավազի, խճաքարի և կավի խառնուրդի փոռում համայնքի փողոցներում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսության տնտեսությունների թիվը 168

ա. անհատական տնտեսություն	168
բ. կոլեկտիվ տնտեսություն	
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը	
	ցենտներ
ա. ցորեն	450
բ. գարի	350
գ. կարտոֆիլ	800
դ. կաղամբ	280
ե. բանջարաբոստանային կուլտուրաներ	1900
զ. միրգ	400
է. կաթ	
ը. միս	
թ. բուրդ	
ժ. մեղր	
ի. ձու	
3. Ցանքատարածություններ	
ա. հացահատիկ	
բ. կարտոֆիլ	
գ. Բանջարաբոստանային կուլտուրաներ	
դ. կաղամբ	
ե. մրգատու այգի	
զ. առվույտ	
է. կորնգան	
ը. Միամյա խոտեր	
4. Անասնագլխաքանակը	/հատ/
ա. Խոշոր եղջերավոր անասուններ	416
այդ թվում կովեր	191
բ. Մանր եղջերավոր անասուններ	1000
այդ թվում մայր ոչխարներ	353
գ. Խոզեր	8
այդ թվում մայր խոզեր	2
դ. Թռչուններ	916

այդ թվում հավեր 776
ե. Մեղվաընտանիքներ 445
5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, /հատ/
Այդ թվում
Ա. համայնքային սեփականության
Թրթուրավոր տրակտոր
Անվավոր տրակտոր
Հացահատիկային կոմբայն
Խոտհնձիչ կոմբայն
Բեռնատար ավտոմեքենաներ
Տրակտորային կցասայլակներ
գութաններ
կուլտիվատորներ

բ. Մասնավոր սեփականության /հատ/
Թրթուրավոր տրակտոր 1
Անվավոր տրակտոր 3
Հացահատիկային կոմբայն
Խոտհնձիչ կոմբայն
Բեռնատար ավտոմեքենաներ 8
Տրակտորային կցասայլակներ 3
գութաններ 1
կուլտիվատորներ

Տողի NN	Եկամտատեսակները	2013	2014	2015	2016
1	2	4	5	6	6
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)**	9091,3			
1100	**1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**	**860,0**			
1110	**1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից**	**600,0**			
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	**600,0**			
1120	**1.2 Գույքային հարկեր այլ գույքից**	**260,0**			
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	**260,0**			
1131	Տեղական տուրքեր	**20,0**			
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	**10,0**			
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար	**10,0**			
1200	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	**7481,3**			
1250	**2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից**	**7481,3**			
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	**7099,8**			
1254	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ	**381,5**			
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ	**381,5**			
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**	730,0			
1330	**3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ**	**730,0**			
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	**360,0**			

շարքացաններ
խոտ հավաքող մեքենաներ
պարարտանյութի ցրիչ
կերամանրիչ

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՒ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կոնկրետ նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Վայոց Ձորի մարզի Խնձորուտ համայնքը եկամտային տեսանկյունից ունի հետևյալ պատկերը

		կողմ	դեմ	ձեռնպահ
Ավագանիներ	Հ. Օհանյան			
	Մ. Ավագյան			
	Վ. Համբարձումյան			
	Դ. Հակոբյան			
	Մ. Բաբաջանյան			

Խնձորուտի համայնքի ղեկավար Ժ. Նազարյան